**15.05.2020 թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-35» պայմանագրի պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ**

**համաձայնագիր № 1**

ք. Երևան 30 դեկտեմբերի 2020 թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲ** ընկերությունը, ի դեմս տնօրեն Գ. Զաքարյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-35» պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. *Համաձայնագրի առարկան***

1. Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը և 2017 թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը՝ կողմերը որոշեցին 2020 թ. մայիսի 15-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-35» պայմանագրի մասով.
   - մատակարարվող ապրանքի քանակը ավելացնել 10 տոկոսի չափով,
   - հաստատել գնման ժամանակացույց նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի,
   - ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով (մինչև 31.01.2021 թ.):
2. Սույն համաձայնագրի 1-ն կետում նշված ապրանքների մասով վճարման ժամանակացույցը կհաստատվի լրացուցիչ համաձայնագրի միջոցով 2021 թ-ին:
3. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-35» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
4. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից. 1-ին էջը՝ սույն համաձայնագիր № 1-ն է, իսկ 2-րդ էջը՝ սույն համաձայնագրի հավելված № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ |
| Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12 | Հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թ.,թիվ 19/2 |
| Կենտրոնական գանձապետարան՝ | Բանկ՝ Կոնվերսբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 19300 68875850100 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 01401592 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Վանյան | Տնօրեն՝ Գ. Զաքարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«30» դեկտեմբերի 2020 թ. կնքված
N 1 համաձայնագրի
Հավելված N 1
15 մայիսի 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-35» ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ապրանքի | | | | | ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | Չ/մ | միավորի գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը*** | մատակարարման ժամկետը և քանակը<br>Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 31.01.2021 թ. |
| 1 | 9411700 | Սեղմված բնական գազ 1 | Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն, գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 15°C, բայց չպետք է գերազանցի 60°C: Լիցքավորումը Երևան քաղաքում կամ դրան հարող տարածքներում (մինչև 5 կմ շառավիղով): | կգ | 292.9 | 2,471,197 | 8,437 | 767 |
| 11 | 9411700 | Սեղմված բնական գազ 11 | Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն, գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 15°C, բայց չպետք է գերազանցի 60°C: Լիցքավորումը Կոտայքի մարզում կամ դրան հարող տարածքներում (մինչև 5 կմ շառավիղով): | կգ | 292.9 | 892,466 | 3,047 | 277 |

*Մատակարարումը պետք է ապահովվի կտրոններով:
**Նշված եռամսյակից որևէ մեկում չօգտագործված սեղմված բնական գազի քանակները պետք է փոխանցվի հաջորդ եռամսյակ:
*** Նշված քանակները առավելագույնն են:

**ԳՆՈՐԴ**
**ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ**
**Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12**
**Բանկ՝ Կենտրոնական գանձապետարան**
**Հ/Հ 900018004649**
**ՀՎՀՀ 02625503**
**Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան**

(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թ.,թիվ 19/2**
**Բանկ՝ Կոնվերսբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 19300 68875850100**
**ՀՎՀՀ 01401592**
**Տնօրեն՝ Գ. Զաքարյան**

(ստորագրություն)
Կ.Տ.